



THE DICKRIS PUBLISHING CO. NEW YORK CITY.



ՏԵԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿՆԵՐԸ ՔԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՑ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 65 ԵՒ ԵՈՐԲ, ՇԱՐԱԹ, ՓԵՏՐՎԱՐ 4 1899 ԳԻՆ 3 ՍԷՆԹ



ՁԵՑՈՒՆԻ ՍԻՒՆԱԿԸ

Ընդհանուր Գանձապետը կր ծանուցանէ թէ՛ Անգլիացի պետական մարդու մը ձեռամբ ցարդ զրկուած գումարն է 250 Անգլիական Լիրայ:

Table with 2 columns: Item description and Price. Includes 'Սրբէն ծանուցեալ \$985.88', 'Նիւ Եորքի Յանախմբէն առ հաշիւ 200.00', etc.

MR. H. TAVSHANJIAN, 343 B'WAY, NEW YORK CITY

Յառաջիկայ Մարտ 4ի Եարթ երեկոյին Լիրիք Հօլի մէջ ինպսակ Ձէյթունի կարօտելոց սեղի պիտի ունենայ Մեծն Ներսէսի ողբերգութիւնը ու կատակերգութիւն մը՝ քաղաքիս Յանձնախմբի տրամադրութեան տակ: Մտից զներս պիտի ըլլան մէկ տարւոյ, 75 և 50 սէնթ: Նուէր բերել կամ նուէր անուրդով վաճառել չի պիտի ըլլայ այս հանգէսին մէջ: Յանձնախուժքն կը բանակցի այժմ Փրօվիտէնի Հայոց Նուագածուաց Խումբին հետ, փոխանակ «պանտի» մը, զիրենք բերել այս ներկայացման. և կը յուսանք թէ պիտի յաջողի այս մասին: Մտից տումսերը պատրաստ պիտի ըլլան քանի մը օրէն, և մանրամասնութիւնք պիտի հրատարակուին պարբերաբար:

Յունվար 28, Սըմիթ. Խմբագիր

Ձէյթունի Համար Հանգանակութիւն մը բացինք այս գիւղի մէջ, և սեղեոյս Հայերէն 11 անձինք նպատակեցին 20 տարւոյ: Այս գումարն կը շնորհէք ձեզ նամակովս հանդերձ: Հաճեցէք յանձնել զայն Գանձապետին: ՄՈՎՍԷՆ Ա. ՊԱՍՄԱՃԵԱՆ

Պոսթոն, Յունվ. 30.

Մէկ քանի շաբաթ առաջ հոս ալ Յանձնախումբ մը ընտրուեցաւ՝ Ձէյթունի սովելոց զբամ հանգանակելու համար: Երէկ Հարանի ժողովին մէջ յանձնախումբն յայտարարեց թէ ի նպատակ Ձէյթունի վիճակահանութիւն մը պիտի ընէ և հանգէս մը պիտի տրուի: 26ի Կիրակի երեկոյին: Յանձնախումբն ամեն միջոց ձեռք առած է՝ օրուան յարմար տեսնախօսներ և լաւ երաժշտական

խումբ մը ձեռք բերել: Պատրաստութիւններ շատ յաջողութեամբ առաջ կերթան և կը յուսանք թէ Պոսթոնցիք լաւ հանգէս մը պիտի վայելին և անտարակոյս իրենք ալ Ձէյթունցիին կորիկ նուէր մը պիտի տան: ԱՊՏԱԿ

ՀՆՁԱԿԵԱՆՔ ՈՒ ԴԻՄՍԱՒՈՐՆԵՐԸ

Աղէքսանդրիայէն Պ. Յարութիւն ծանկիւլեան հրատարակութեան համար մեզ յղած է շարք մը թղթակցութեան օրինակներ, որք փոխանակուած են իր և Հնչակեան Յեղափոխական կուսակցութեան պատգամաւորական ժողովոյ մէջ: Նկատելով որ ՏԻԳՐԻՍԻ սիւններն շատ նեղ կուզան այս ընդարձակ թղթակցութիւններն հրատարակելու, պիտի բաւականանանք անոնց համառօտութիւններն միայն տալով, որով գաղափար մը տուած կըլլանք բուն խնդրոյն վրայ:

Առաջին նամակին օրինակն է հետեւեալը.

Պրն. Յարութիւն ծանկիւլեան Գաշիքէ. Հնչ. Յեղ. Կուսակցութեան շրջ Պատգամաւորական Ընդհ. ժողովը, շորս պատգամաւորներէ բաղկացեալ մասնախումբ մը կազմեց, պաշտօն տալով անոր, ձեզ հրատարակելով՝ բացատրութիւն պահանջել «Իմական»-ը: Ի պարտականութեան մասին:

Ժողովը պիտի վերջանայ յառաջիկայ Եարթ օր. ուստի հաճեցէք Հինգշաբթի կէսօրէն առաջ Աղէքսանդրիա գտնուել, Հաճի Տուսուի հօթէլը, ուր ձեզ պիտի սպասէ մասնախումբի անդամներէն Կրն. Իսրայէլ:

Ի Դիմաց Պատգամաւորական Ընդհանուր ժողովոյ Ատենադպիր Ատենապետ ՂԵՒՈՆԻ ՇԱՀՄԻՐ Կ. Յ. ՓԱՓԱՋԵԱՆ 98 Հոկտ. 17, Աղէքսանդրիայ

Երկրորդ նամակը Պ. ծանկիւլեանէն գրուած պատասխանն է, որով նամակագիրն խնդրուած բացատրութիւնները կրնայ տալու համար կը պահանջէ որ նախ՝ անկախ Բնիկ յանձնախումբ մը կազմուի, որ բաղկացած ըլլայ երկու Գանձակցական, երկու Նազարէկեան, երկու անկախ, երկու Մարտեան և մէկ այս ութը անձերէ ընտրուած անդամներէ: Երկրորդ՝ եթէ ատենադպիր Աղէքսանդրիայ մէջ կազմուի, իր ծախքերն վճարել՝ դատավարութեան առաջին ամսուան համար 4 անգղ. ֆուր, անկէ վերջ իւրաքանչիւր ամսի համար 3 անգղ. ֆուր: Երրորդ՝ եթէ այս վերջի պայմաններն անընդունելի ըլլան, Պ. ծանկիւլեան իրաւունք ունենայ իրեն փոխանորդ մը կարգել: (Շարունակելի)

Ա. Ձ. Դ.

Երիտասարդաց Որբախնամ Ընկերութիւնն նրտու ունի Ս. Ոսկերեան և կեղեցեոյ մէջ, յառաջիկայ կիրակի օր, ժամերգութիւնէն անմիջապէս յետոյ:

ՅԱՒԱԼԻ ԱՐԿԱՍՏ ՄԸ

Անցեալ Չորեքշաբթի առաւօտ Պետրոս Բէլ Սարգիսեան անուն Բերիցի Հայ երիտասարդը, որ կը բնակի ի թիւ 430 Ուէյսթ 40րդ փողոց, Նիւ Եորք, իր աշխատած գործարանի բեռան և լեւէլին (էլէվէյթը) և մէկ դասիկոնի առաստաղին մէջ բռնուեցաւ ժամը 11ի ատենները, ու ճրգմուեցաւ ահռելի կերպիւ, անանկ որ ըժշկի հասնելէն առաջ՝ աւանդեց հոգին: Գործարանատէրը՝ Մր. Մօրկըն, որոյ գործարանն էր Ալիւրի մօտ է, ահաբեկած այս ստակալի արկածէն, նոյն օր փակեց գործարանն ու յանձն առաւ խելճ աղուն թողման բոլոր ծախքերը հօգու իր քսակէն: Պետրոս հաշիւ 25 տարեկան կար, և տարիէ մի վեր է որ Ամերիկայ կը գտնուէր: Իր գրպանի մէջ 150 տարր գտնուած է, որ յանձնուած է Մր. Մօրկընի: Ի հարկէ Ազգ. Հոգաբարձութիւնն պէտք եղածը կը տնօրինէ այս մասին:

Ի ՈՒՆԵՍԹ ՀՈՊՈՒՐԸ

Յունվար 30. Անցեալ կիրակի օր Ուէյսթ Հոպորնի Լուարանին մէջ կարևոր խնդիր մը ձեռնուեցաւ: Մայրենի լեզուի վրայ Պ. Վահան Պատմաճանէ ճառ մը կարդացուեց և քանի մը երգերէ վերջ՝ խնդիր եղաւ և որոշուեցաւ, տեղւոյն 50ի չափ հայ մանկանց հայերէն սորվեցնելու համար, ընկերութիւն մը կազմել՝ անոնց համար վարձարան մը բանալու նպատակաւ: Այս մասին՝ մասնաւորապէս պատրաստուած ծրագիր մը կարդացուեցաւ, որ ընդունուելով Յանձնախումբի մը յանձնուեցաւ՝ զայն ընդարձակելու ու կարգի դնելու համար: Այս յանձնախումբին անդամ ընտրուեցան Տիրաք Ճէյէզեան, Թանամեան, Բրուտեան, Պոյաճեան և Պատմաճանէ: Պատ. Սարկաւազեան ներկայ լինելով այս ժողովին՝ խօսեցաւ ու երգեց «Մի՛ ձեռնակու» որ մեծ ընդունելութիւն գտաւ:

Լուարանի ժողովէն վերջ, ընդհանուր ժողով մը կազմուեցաւ նոյն սրահին մէջ՝ նոր Սրահ—Եկեղեցի մը շինելու խնդրոյն վրայ մտածելու և Յանձնախումբի տեղեկագիրը լսելու համար: Այս պահուս ներս մտաւ Սարաճեան Սրբազան, որ հրաւիրուած էր մասնաւորապէս: Յանձնախումբը իր տեղեկագիրը տուաւ ու անդամներէն քանիներ տեղեկութիւններ տունն գործին վրայ Յանձնախումբի մի քանի պահասեալ ու հրաժարեալ անդամաց սեղ նորի ընտրուեցան ընդհանուր քուէարկութեամբ. այս նոր ընտր անդամներն են Տիրաք Թըռնամեան, Թաշճեան, Ճէյէզեան, Մըզրագճեան, Պոյաճեան և Պատմաճանէ: Ընտրութենէ վերջ Սարաճեան սրբազանը «քանի մը խօսք» ըսաւ: Սըրբազանը կատարելապէս վճատեցոց ժողովուրդը, և ըսաւ թէ՛ ինք ո՛չ յանձն կառնէր և ո՛չ ալ կը խոստանայ աջակից ըլլալ այս գործին, վասն զի, «որբերու և աղքատներու» մեծ գործ մ'ունէր իր առջև: ՏԻԳ-

ՐԻՍԻ Խմբագիրը, որ քիչ մ'առաջ յոյս յայտնեց թէ Սարաճեան Սրբազան՝ փորձառու ըլլալով Եկեղեցի շինելու մէջ՝ մեծ զարկ պիտի տար այս սրահ—Եկեղեցիի շինութեան համար, այս անգամ շնորհակալութիւն յայտնեց Սրբազանին, որ «սրբերու և աղքատներու» խնդիր ունէր և Կ'ԸԲԱՂԷՐ անով: «Այդ խնդիր Եկեղեցիի խնդրէն շատ կարևոր է ըսաւ, զի ամեն մի որբ կենդանի Եկեղեցի մ'է ազգին համար:

Ժողովոյ փակուած ատեն ալ բաւական մտած էր. շատեր Սրբազանի աջը համբուրելու գնացին. ասոնց մէջն էր նաև ՏԻԳՐԻՍԻ Խմբագիրը, որ իր պարտականութիւնն ու քաղաքավարութիւնն նոյն ընել գնաց: Բայց զարմացաւ երբ Սարաճեան սրբազան, զայն ու անոր երկնցուցած ձեռքը տեսնելուն պէս, իր ձեռքերը ետին պահեց ու քանի մը խօսք կըմկմալով՝ առաւ քաղց բարկութեամբ: Ներկայք ափ ի բերան մնացին... զի Գրիտոսը ներկայացնողէ մը այսպիսի ընթացք չէր կրնար ակնկալուիլ: Հայ Եկեղեցեոյ երգուեալ պաշտօնեայ մը կրնայ այսպէս վարուիլ Եկեղեցեոյ մէկ զաւակին հետ և միևնոյն ժամանակ պատարագ մատուցանել...: Վայ՛ քեզ քաղաք...:

ԳՈՒՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՄՍՍԻՆ

Ամեն անոնք որք քուէ տալ կուզեն, պարտին անպարեւել, զի մէկ երկու շաբաթէն պիտի գնացնեն քուէարկութիւնն:

Ոմանք մարդիկ, թէ՛ հոս և թէ՛ դուրսերը, կը խրատեն եղեր ժողովուրդը ձեռնպահ մնալ այս խնդրի մէջ: Ձեռնպահ մնալը Եպիսկոպոսին բարեկամութիւն ընել չի նշանակեր, և ո՛չ ալ ՏԻԳՐԻՍԻՆ հակառակութիւն:

Քուէ տուողներուն անունները չի պիտի հրատարակուին, հակառակ ոմանց կարծածին:

Քուէաթուղթ շունեցողներն կըրնան դիմել մեզ կամ մեր գործակալներուն:

Քուէաթուղթ կարելի է ստանալ նաև Պ. Ուղուենանէ, որուն վաճառատան մէջ դրուած է քուէատուփը: Քուէներն պէտք է շրջել հետեւեալ հասցեով:

To the Dickris Committee, 159 E. 27th Street, New York City.

ԱՁԱՏ ԼՍՍՐԱՆ

Էլքս Հօլ, Պրօտուէյի և 27րդ փողոցի անկիւնը, Նիւ Եորք: Այս կիրակի երեկոյ, ժամը ճիշդ 8ին Պիտի խօսի Պատուելի Յ. Սարկաւազեան, նիւթն է «Երգը, անոր ազգեցութիւնը և երգելու եղանակը»: Ատենախօսն ծանօթութիւններ ալ պիտի տայ Փրօվիտէնի Հայ նուագածուաց խմբին վրայ: Պ. Գրիգոր Պողաճեան ճառ մը պիտի կարդայ, որոյ նիւթն է «Կարևոր ազգեր»: Երգեր պիտի երգուին և դաշնակի վրայ մի քանի եղանակներ պիտի նուագուին:

«ՆԻՆՅ ՏԱՐԻ ՊԱՆՔ»

(Բ. և Վերջ)

Միջազգային ամեն դժուարություններ հաշտարար ատեանի մը առջև լուծելու գաղափարը ի հարկէ շատ գնահատելի է, բայց ընդհանրապէս շատ գնահատելին ու փափաքելին անգործաբերի կ'ըլլայ ու ձեռք չ'անցնիր՝ այս աշխարհի վրայ: Զարին առաջարկած Հաշտարար Վեհաժողովը, որ պաշտօն պիտի ունենայ արդարութիւնը ի գործ դնել, անյաջողութեան պիտի յանդի անշուշտ, եթէ իւր պաշտօնն խղճի մտօք կատարել փորձէ. և արդէն անտեղի է ինքնին արդարութիւն ակնկալել այնպիսի մարմնէ մը, որոյ անդամք մեծ տէրութիւններն ու անոնց շահերը միայն պիտի ներկայացնեն, ուստի կատարած լուծելի չի մընար թէ այսպիսի մարմնոյ մը տուած ո՛ր և է մէկ վճիռը պիտի չի կրնայ գործադրելի կամ ընդունելի դառնալ, եթէ մեծ տէրութեան մը շահերուն հակառակ նկատուի. հետեւաբար յոռետեսութիւն չի կրնալ ըլլալ կարծել թէ, ինչպէս որ ամեն սեղ, այդ վեհաժողովին մէջ ալ իրաւունքը զօրաւորին պիտի ըլլայ, զի այս մարդկութիւնը հրեշտակի մը պէս արդար և առաքելի ըլլալու բարձրութեան չէ կրցած հասնիլ:

Կը պատմուի թէ առեւծը արդարութեան ատեան մը կը կազմէ, ու անոր անդամ կը կարգէ էջը, Զօրին, գայլը ու աղուէսը: Օրին մէկը ասոնցմէ մին կը յաջողի պարարտ որս մը ձեռք բերել, զոր արդարութեան ատեանին կը յանձնէ՝ բաժնուելու համար: Բաժանարարի պաշտօնը չի կը տրուի. «այսն ու չքեղ սկանջաւորը» ամենայն հասարակութեամբ ու արդարութեամբ կը կատարէ իր պաշտօնը. բայց առեւծը այդ արդարութեանէն գոհ չի մնար, և մէկ հարուածով խեղճ էջը անկենդան գետինը կը փռէ՝ իր տգիտութեան համար: Երկրորդի մը կը սրուի նոյն պաշտօնը, և այն ալ էջի բաղդին կ'արժանանայ. բայց երբ կարգը կենդանոյ աղուէսին կուգայ, այս վերջինը կը յաջողի, միւս անդամներն օրինակներն աչքի առջև ունենալով՝ բուն արդարութիւնը ի գործ դնել՝ բոլոր որսը սուրճ թագաւորին հրամայելով. և ի հարկէ անիրաւ հեզօրը գոհ կը մնայ, վասն զի ժողովին մէջ զէժ մէկ արդար բաժանարար կը գտնէ վերջապէս...:

Հասարակ մահկանացուք Տէրութիւններու և թագաւորի գլուխներու անյազ ու անկուշտ փորը քաջ գիտնալով՝ այլ կերպ չեն կրնար մտածել Զարի հաշտարար վեհաժողովին վրայ, այլ վաստահարար կարծել թէ այդ եւրօպական արդարութեան ատեանը պիտի կատարուի ճիշդ այնպէս որպէս կատարուած է առեւծի երեւակայական ժողովը: Եւ մարդ - առեւծները այնչափ բիրտ են, չաճաճ ու անարդար, որչափ բնութեան վայրագ կենդանին է՝ իր որկորը լեցնելու համար: Մարդիկ ընդհանրապէս՝ դեռ անասուններէ տարբերուած համար, այսպիսի խնդիրներու մէջ, դարբնու կրթութեան ու սղնուցման պէտք ունին, եթէ երբէք այդ կարելի է ստանալ այս կենսաբի մէջ:

Վայրկեան մը կարծենք թէ Հաշտարար ատեանը կազմուած ու որոշուած է մեծամասնութեամբ թէ, Ռուսիոյ թիւն տակ, Ազատ-Հայաստան մը ստեղծելու է՝ Հիւսիսային արջի անիրաւ առաջխաղացութիւնն արգելելու համար, և անոնք թէ վեհ. Զարի կատարութիւնը, որ 100 հազարներու ջարդուիլը հրահանգեց, ու թոյլատրեց, պիտի հաճի սեղի տալ ու ընդունիլ: — Բնաւ ո՛չ, Ռուսիա չի հնազանդիր այդօրինակ որոշման մը, եթէ միւս բոլոր տէրութիւններն իրեն դէմ զինուին:

Այս և այսօրինակ շատ մը պարագաներ, որոց վրայ խօսիլը ընդարձակ էջերու կը կարօտի, աչքի առջև բերելով՝ հարկադրուած ենք հատուալ թէ Զարին առաջարկը, եթէ թագուն նպատակներ ալ չունենայ, երազ մ'է ինքնին. և եթէ գոթադրաբար Տէրութիւնը յաջողին այս մասին տեսակ մը հասկացողութեան գալ — իրար խաբելու յոյսով — ու դաշնագրութիւն մը կնքել «հինգ տարի մարդու միտ ուսելէ հրաժարելու պայմանաւ», այդ դաշնագիրը պիտի ունենայ այնչափ արժէք ու զօրութիւն, որ չափ ունեցաւ Պէլլինի հոշակաւոր դաշնագրութիւնն ու անոր ճիշդ յօդուածը, որ մեր արդի գոթադրութեանց հիմնաքարը եղաւ: \* \* \*

Զարի այս խաղաղութեան ու ղէնդնկեցութեան առաջարկը, ինչ կերպով ալ յաջողի, մեզ Հայոցս համար օգտակար չի կրնար ըլլալ:

Վերջի ջարդերը տեղի ունեցան Ռուսիոյ քաջալերութեամբ ու խրատով — անոր համար կատարուելու տեղի չի կայ բնաւ — ու Եւրոպական տէրութիւններէ քանինքն ալ, իրենց այս և այն շահուն համար, կամ ձեռնպահ մնացին և կամ համակրեցան Հիւսիսի առեւծին՝ այդ սոսկալի խնդրոյն մէջ: Սակայն գտնուեցան տէրութիւններ ալ, ինչպէս Անգլիա, որք՝ թերեւ իրենց շահուն համար՝ հակառակ հանդիսացան այդ սոսկալի արեւմտեան թիւններ, որոց գոհ կերթար անմեղ ու խաղաղ ժողովրդի մը սկար ու անպաշտպան մասը. և ասոնց հակառակութիւնն թէ և նրկատի չ'առնուեցաւ գործի ամենատոկալի լուծելին, բայց և այսպէս անտես չեղաւ բոլորովին, զի Ռուսիա գիտէր թէ Եւրոպայի անդի ծայրը, քանի մը կը զիններու մէջ առ

պատանած Անգլիական առեւծը, որոյ թեւերը երկրագունքը կը բոլորէին, կրնար մեծ շփոթութիւն մը յառաջ բերել բոլոր աշխարհի մէջ, և զգուշացաւ մի քիչ. եթէ ոչ, ո՛չ միայն Հայաստանի, այլ և գուցէ գաղթականութեանց հայերէն շատերն ալ թրքական սրէն անցնէին: Եւ ի՛նչ յուսահատական ու սոսկալի պիտի ըլլար մեր վիճակը՝ եթէ Հաշտարար վեհաժողով մը գոյութիւն ունեցած ըլլար այդ օրեր, և անոր մեծամասնութիւնը՝ Ռուսիոյ վախէն ու ազդեցութենէն ձայնակցէր մեծ մարդասպանին:

Հայկական խնդրոյ լուծումը ընդհանուր պատերազմէ մը վերջ միայն կրնանք ակնկալել. Տէրութեանց մէջ չի կտուելու հինգ տարի պայմանագրով՝ հինգ տարի վստահ շարժարանք կը նշանակէ մեզ համար, առանց ո՛ր և է ակնկալութեան: Եթէ թուրքը թոյլ տար որ զարգանայ Հայ տարրը այդ ժամանակամիջոցի մէջ, զինագաղաթը նպատաւոր էր Հայուն համար, բայց այդ կարելի չէ ակնկալել. և Ե տարի շարունակ սպասումն ի հարկէ մահացուցիչ նոր հարուած մը կըլլայ այն յոյսին, որուն սեւեռած ենք մեր աչքեր:

Մեր խնդրի լուծումը — կամ Հայկական բարենորոգումներն տեսնելու յոյսը այն ատեն պիտի աւելի զօրանայ մեր մէջ, երբ Եւրոպական քաղաքականութեան մէջ մեծ փոփոխութիւն մը յառաջ գայ. իրայ ներկայ վիճակին (բոթնիսթ) պահպանումը մահուան դատաւճիռն է մեզ համար: Ընդհարում մը, ընդհանուր խառնակութիւն մը կամ պատերազմ մը միայն կրնայ փոփոխութիւն մը յառաջ բերել: Հայերու 100 հազարին համար տէրութիւնը իրենց խաղաղութիւնն շեն վերդովքը բնաւ ո՛ր և է ժամանակ:

Պատերազմը պիտի ըլլայ օր մը, և պիտի ըլլայ անշուշտ. այսպիսի առաջարկներ ու ծրարագրերն բուռական չեն զէնքերը ջախջախելու համար, զի շահը արդարութեանէ աւելի բարձր կը լսուի կատարութեանց ակնջինը: Մենք հազարներ կորսնցուցինք. մեր կուրուստը դարմանելու համար՝ մեծ փոփոխութեան մը պէտք կայ, և այդ փոփոխութիւնն ընդհանուր պատերազմով միայն կրնայ կատարուիլ: Արդ քանի որ պատերազմը օր մը չէ օր մը, անխուսափելի է, ուստի մենք սուղութեւն ենք որ շուտ պատահի այդ, և Եւրոպական ազգերն առանց «մեծ պահոց մատուցելու», շուտով իրարու միտ ուսել սկսին:

Մեր կորսնցուցած հարիւր հազարներն ալ հօր ու մօր զաւակներ չէին...:

ՈՒՐԻՇ ԵՐԵՍ ՄԸՆ ԱԼ «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՆԱՐՆԷՆ» — 38 — ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱՆ ԱՌ ՄԻՄԵՌՆԱԿ

Վ՛ի ծիծեռնակ, վարանած թռչնիկ, ի՛նչ տխրագին ձայնիկ կ'եղանակես մօտ իմ բանտիս. Միթէ վարուժանդ սիրուն Հոս միայնակ թողուց քեզ, Եւ դու անսխիթար կը հեծեծես. Ե՛կ, լա՛ց ուրեմն ինձի հետ:

Բայց երա՛նի, քեզ ըն՛ւր երանի կրնաս թռչիլ, թեթեւ թևոցդ ի ծայր՝ ընդ սար և ձոր. Իսկ Հոս, արևուն նշոյն աղօտ Մութ բանտիս է անթափանց. Եւ ո՛չ մեզմ հովիվ մ'ալ կը փչէ, Որ տանի ձայնս իմ սիրելեաց:

Գէթ դու գնա՛ գտնիլ սիրելիդ. Սլացի՛ր արա՛գ, սակայն Դարձի՛ր նորէն մօտ շուտախ, Եւ Հոս հանգչէ՛ այս իրինկուն, Հոս հանգչէ՛ այս իրինկուն, Եւ մութ շիրմիս վրայ ճվճվաղով, Գէթ դու յիշէ՛ զիս անմոռաց:



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ  
կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,  
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:  
Հ. ԷԿԻՆԵԱՆ - - - - - Խմբագիր  
ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ  
ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ  
ՏԼ. ՍԹ. Տարեկան 10 Փրանք.  
Տարեկան 1 50  
Վեցամսեայ 75 Բաժանորդագրին կԱՆՈՒԿ  
Յուամսեայ 40 վճարելի է միշտ:  
Մրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝  
To the DICKRIS PUBLISHING CO., 145 East 23d St., New York City  
Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱՐԱԹ, ՓԵՏՐՎԱՐ 4 1899.

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Տ. Գալճեան, Հայկական Միութեան Փոխ-Աստիճակաւոր (Աստիճակաւոր հրատարակչական ատեանի), նամակ մը գրած է մեզ, որով կը խնդրէ հրատարակուի ծանուցանիք յիշեալ միութեան բոլոր անդամներուն թէ՛ այս օրեր ընդհանուր ժողովի մը պիտի կանչուին՝ Միութիւնը կազմակերպելու կամ վերջնականապէս լուծելու համար: Տ. Գալճեան կը յաւելու նաև թէ ինք արդէն հրահանգած է ընկերութեան Գանձապետն՝ հրաւիրագրեր ցրուելու և ժողովարար մը վարձելու համար պէտք եղած հարկաւոր ծախքերն հոգալ այս առթիւ, և թէ և Տ. Պուրապեան թեոքան մը ըրած չէ այս մասին, բայց կը յուսայ թէ պէտք եղածը կը կարգադրէ շուտով, որպէս զի այս առկախ խնդրին մի անգամ ընդ միշտ կարելի ըլլայ լուծել:

Հայկական Միութիւնը մեռած չէ անշուշտ, և ժամանակ է որ արթննայ իր երկար քունէն: Քաղաքիս գաղթականութեան ամեն դասակարգերն յարարութեան մէջ ղեկու լաւագոյն կազմակերպութիւնն կրնայ ըլլայ այս միութիւնը՝ երբ յարութիւն անէ ու որոշ ճամբայէ մը քաշել սեպի: Տարի մը առաջ այս խնդրի մենք յուզեցինք այս սրեւերու մէջ, բայց կը թուի թէ մտքերը պատրաստուած չէին տակաւին ու ընկերութիւնն դեռ քնանալու անխորժակ ունէր այն ատեն, սակայն հիմայ ժամանակը փոխուած կ'երեւի այս մասին ու արթննալու նշաններն սկսած են տեսնուիլ. միակ դժուարութիւնը առաջին ժողովը գումարելու մէջ կը կայանայ այժմ, և առաջին ժողովը առաջին քայլն է՝ ընկերութիւնն ստեղծելու համար. և եթէ մէջ մը քունէն արթննայ այդ մարմին, կրկին անգամ վստահ ենք որ չի պիտի ուզէ քնանալ ո՛ր և է քնով:

Ընկերութեան պաշտօնեայք ժամանակ է որ անպարտեն այս մասին, զի Հայկական Միութեան պէտքը գաղթի է գաղթականութեան մէջ: Եթէ մեռած է նա, թողնեք զայն, ու անոր ստացուած քններն, որք ցրուած են Հոս ու Հոն՝ ու բաւական արժէքաւոր, ժողովներ ու յիշեք անոր որուն կատարուած է կանոնագրի մէջ. իսկ եթէ մեռած չէ — և կը հաւատանք որ մեռած չէ — ժամանակ է որ օտքի հանենք զայն, զի պէտք ունինք իրեն:

ՄԵՐ ԲԺԻՇԿՆԵՐԸ

Տըթ. Սրբազանի քանի մը շարաթներ առաջ շարք մը ատենախօսութիւններ ըրաւ Ազատ Լսարանի մէջ, արանց յատուկ հիւանդութեանց վրայ, և այնպիսի խրատներ տուաւ երիտասարդներուն, որք տարակոյտ չունինք թէ արդիւնաբեր պիտի ըլլան և օգտակար՝ շատերուն համար. ժողովուրդը ի սրտէ գնահատեց Հայ բժշկի ըստմաներն ու շնորհակալ եղաւ անկէ: Վերջի ժողովին, որ տեղի ունեցաւ երկու շաբաթ առաջ, ժողովարարը այնչափ նեղ եկաւ բազմութեան, որ շատեր ստիպուեցան ետ դառնալ տեղ չի կրնալ գտնելուն համար:

Երանի էր որ մեր միւս բժիշկներն ալ, որք բաւական շատ են թուով, հաճէին հետեւիլ Տըթ. Սրբազանի այս օրինակին ու զգուշացնէին Հայ երիտասարդութիւնը շատ մը նմանօրինակ հիւանդութիւններէ ու վտանգներէ, որք արդիւնք են շատ անգամ ազիտութեան և անհոգութեան: Մենք կը հաւանք թէ մեր բժիշկները, որչափ ալ անտարբեր ընդհանրապէս, չեն ուզեր որ առողջապահական շատ մը կարեւոր խնդիրներու մէջ Հայ երիտասարդը տգէտ մնայ ու իր ազիտութեամբ գոհ երթայ մահացուցիչ հիւանդութեանց: Հայ բժիշկը, այո՛, չենք կրնար հաւատարմութիւն տալ, որպէս զի իր առևտուրը յաջող ըլլայ, ու գործը՝ շահաբեր, և կ'ակնկալենք որ փորձով ցոյց տայ թէ կուզէ Հայ գաղութը ազատ ըլլայ հիւանդութենէ՝ հակառակ իր քսակին ու շահին:

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ի Բ Ք

—o—

Ըստեղծվել է կը գրեն թէ անց- եալներն տեղւոյն Բողոքական ազ- գայինք երկրորդ անգամ ըլլալով՝ Պատ. Սաղոյնեան հրաւիրած են հոն՝ տեղւոյն Հայոց քարոզելու համար: Պատուելին երկու մկրտութիւններ ալ կատարեր է, որոց մին Հայ եկեղեցոյ զաւակ է եղեր: Թղթակիցն կը հարցնէ թէ՛ Հայաստանեայց եկեղեցոյ պաշտօնեայք, Նիւ Եորքի Հոգարարաձեռնութիւնն ու մանաւանդ Եպիսկոպոսը պէտք չէ՞ որ ուշագրութիւն դարձունեն այս շրջակայց մէջ զանուած Հայ. Եկեղեցոյ զաւակներուն ու «կորուսեալ ոչխարներուն»:

—Քաղաքի Հայ Բժիշկներէն՝ Տքթ. Մկրտիչ Էլիազարեան, Տքթ. Քարիպ անուն պարսկաստանցի բը- ժիշկի մը 47 տարի շափ դրամ փոխ կուտայ ժամանակ առաջ, որպէս զի այս վերջինն նոր գեղատներ գնէ՝ ա- մերկուհի մը հետ ամուսնանալու համար: Օրին մէկը երկու բժիշկնե- րուն մէջ յարաբերութիւնք կը ձգ- տին, ու պարտադրեալ չի կրնալով իր փոխ տուած դրամը գանձել՝ դա- տարանի կը գրմէ ի Պրուքլին ու դա- տավճիւր մը կուտանայ Տքթ. Քարիպի դէմ: Այս վերջինն, որոյ կրնն 500,000 տոլարի շափ դրամ ժառանգած է իր հօրմէն, կը մերժէ 47 տարը վճա- րել: Պրուքլինի թերթերն կը պատ- մին թէ պարտապանը անցեալ օր նախնական քննութեան կենթարկէ Տքթ. Քարիպը քաղաքին բարձրա- գոյն ատենի հրամանաւ, բայց չի յա- ղողիր դրամը գանձել: Լրագրոց պատմածին նայելով՝ Տքթ. Քարիպ 30 տարեկան մարդ մ'է, իսկ այն կի- նը, այրի Տիկին Իրլ, որուն հետ ամուսնացած է, 50 տարեկանէ աւելի է եղեր Քարիպի հետ ամուսնացած ժամանակ:

—Մեր Ֆիշարդի թղթակիցը կը հերքէ մեր ՅՆԻԹ Թուով հրատարա- կած այն նամակը, որ կը վերաբերէր Տիրատուրեան, Պաշտօնեան և Ռուբինե- ան անուն անձանց խնդրոյն: Սօդ- ուստեանի պատմածին նայելով՝ հե- տեւեան է եղելութիւնը: Յիշեալ ան- ձինք կազանդի առթիւ սերտութիւն կընեն Ռուբինեանի տան մէջ, և ա- ռանց ո՛ր է անպատեհութեան կը մեկնին: Հիւրերու երթալէն վերջ, Ռուբինեան ալ դուրս կելնէ ու բա- րեկամեան կը հանդիպի, ասոնց ստիպմամբ իմեալ կ'երթայ հետե- րին: Վերադարձին Ռուբինեան՝ իւր տան առջև ոստիկանի մը կը հանդի- պի, որոյ քով Հայ մը կեցած կայ ե- ղեր: Ռուբինեան կը ձեռքակալուի հոն՝ իր արբեցող: «Այս է բոլոր ի- րողութիւնը, կ'ըսէ թղթակիցը. ո՛չ թաւեցուց բողոք կայ, ոչ առն կո- խելու խնդիր և ոչ ալ ամերկու- հի մը ներկայութիւնն գործի մէջ»:

—Բրիտանացի շէտրալի Յուսէլ. 25ի թուին մէջ Պատ. Պարնըմ Սարբեր- դէն նամակ մը կը հրատարակէ, ո-

րով նոյն թերթի զրկած մէկ գու- մարին համար, յանուն որոց, շնոր- հակալ ըլլալէ վերջ, կը նկարագրէ մեր խեղճ պղտիկներու ընդհանուր վիճակն, և միսիօնարաց հսկողութեան տակ գանուած երկու որբանոցներու կացութիւնը: Նոյն թուի մէջ հրա- տարակուած կան նաև յիշեալ երկու որբանոցներու մէջ պատուարեալ Հայ անաէր պղտիկներու պատկերներն ու երկու որբերու կողմէ գրուած շնոր- հակալութիւն յայտնող երկու նա- մակներու թարգմանութիւններ, որք ուղղուած են զիրենք (որբերը) խնա- մող օտարական ու անձնօթ բարե- բարաց: Այս նամակներէն մին սառ- րագրուած է Սուլթան Գալիպուլի- նէ, իսկ միւսը Արքայաճամ Նահիկեա- նէ. երկուքն ալ Բերբէն:

Մեր որբերը այսպէս՝ օտարներէ կը խնամուին...:

—Հըստըն մեզ կը գրեն թէ՛ տեղւոյն ընկերութիւնը, որ կազ- մուած էր սրբերուն օգնելու և տե- ղական Հայոց մտաւոր ու բարոյա- կան զարգացման աշխատելու նպա- տակաւ, ամսոյս 22ին՝ անդամոց մե- ծամանութեան քուէովն՝ լուծուած է, գանձին մէջ թողալով § 848: Տեղ- ոյն Հայերէ քանիներն հանգանակու- թիւն մը բանալով՝ այս գումարն 25 տոլարի հասցուցեր ու որոշեր են զայն զրկել Մաշից Վարդապետին՝ Կեսա- րիոյ մէջ յիշեալ ընկերութեան պա- հած որբերի որբին տարեկան ծա- խուց յատկացուելու համար:

—Մեր Թրոյի թղթակիցը՝ Սանիմ կը գրէ Յունիար 18 թուով.

Ազգ. Հոգարարաձեռնութեան հրաւի- րանօք Արժ. Սաղ Վարդապետ տեղը դալով՝ անցեալ Կիրակի Յունի. 15 Նոր տարու և Ս. Մնջղեան տօնի րու առթիւ Ս. Պատարագ մատոյց:

Տեղւոյս Որբանոցն ընկերու- թիւնը նոր Տարուայ առթիւ, նոյն կի- րակի երեկոյին մի հանդէս տուաւ ինպատակ որոց: Հրաւիրեալ էին ար- ժանապա. Սաղ վարդապետ և Պատ. Իգնատիոսեան. ներկայ էին 90 մօտ երկուսը Հայ հանդիսականք: Հանդէ- սը բացուեցաւ ժամը 7 1/2ին՝ ատենա- պետութեամբ Պ. Սէյտուլազ(․) Է- կիլիանի: Տեղեկագրէն տեղեկա- գրէն կը տեղեկանաք որ ընկերու- թիւնը այժմ ունի 26 անդամ, §45.75 պատրաստ դրամ և 2 ալ որբ կը պա- հէ: Հանգանակութիւն մը ըլլալով՝ §6.25 հասաքուեցաւ, որ շատ պղծ- տիկ գումար մ'էր այդ բազմութեան համար»:

—Փօթաբէթի Իվինիկ թրիպիւն Լրագիրը խմբագրականաւ մը կըսէ թէ՛ Գուպացոց ազատուելէն վերջ՝ Հայոց դժբաղդութեան խնդիրն է որ նկատողութեան առնուելու է: Մեծ անբուժիւններն, որք 20 տարի առաջ խոստացան բարենորոգել այդ երկրը, անտարբեր մնացին և վերջի կոտորածներուն աստե՛ն բոլորովն լճե- եալ թողուցին զայն: Անգղիոյ վեր- ջերս կայսեց այն տասներկու մահմե- տականներն, որք անգղիացի քանի մը

նաւազներ սպաննած էին Կրէտէի մէջ, բայց այն մահմետականներն, որք հա- զարաւոր անօգնական Հայեր ջարդե- ցին թուրքիոյ մէջ՝ անպատիժ կը մը- նան: «Սուլթանը մերժած է օգնել Հայ չքաւոր որբերու բազմութեան, բայց կրնայ առատ ծախսել իր վե- հափառ Գերման հիւրին համար: Ուր- իմ կայրը մի իրոններ կը ծախսէ՝ Երուսաղէմ ու խալի երթալու համար, մինչ Գերման եկեղեցոյ մէջ Հայոց համար եղած հանգանակութիւններն սանձահարել կը ջանայ»:

—Անցեալ Կիրակի օր Սարաճեան Սրբազան գրուի գործոց քարոզ մը խօսեցաւ Ս. Ոսկերեան եկեղեցոյ մէջ. խրատեց ժողովուրդը որ միակ հաստան՝ առանց փաստ, ապացոյց և պատճառ հարցնելու, և թէ՛ ոչ՝ կը կո- ընչին: Երանի տուաւ հին ժամա- նակներուն, երբ Հայերը կը նահա- տակուէին կրօնի համար: (Վերջի 100 հազար նահատակներն հիւներուն շափ արժէք չունին...: Վերջի դէպ- քերը, ջարդերը և Գրիստանեայ ազ- դաց անտարբերութիւնն ամենէ հա- ռատացեալ մարդն անգամ թերահա- լատ կընեն: Ինչպէ՞ս բացատրենք այս ամենը...):

—Մեր Ուսթըրի թղթակիցը կը գրէ. «Ուսթըրի Ազգային Լսարանը, որ ամիսներէ ի վեր փակ էր, և Ու- սումնական խորհրդի անգամբ՝ ան- տարբեր էին իրենց կոչման, այս կի- րակէ կանոնաւոր ժողով գումարնե- ցին և լաւ լսարան մը ունեցանք. ա- տենախօսութեան համար յատկապէս հրաւիրուած էր Ֆիշարդիէն Պ. Սար- զիս Մայմէզեան, որոյ նիւթն էր «ինքնազարգացում», աստենախօսը իւր ընտրած նիւթին վրայ շատ լաւ խօսեցաւ»:

—Մեր Պոսթմի թղթակիցը կը գրէ. «Երէկ Լսարանի ժողովին մէջ Ամերիկեան քաղաքացի լինելու խն- ղերը ծեծուեցաւ: Գարձ աստենախօ- սութիւններ եղան՝ ցուցնելու թէ որ- քան օգուտներ կուենանք ամերիկե- ան քաղաքացի լինելով. ժողովն մի- աճայն որոշեց մեծ ժողով մը գու- մարել, հրաւիրել շրջակայից Հայերն ալ և միջոցներ ձեռք առնել՝ ամե- րիկեան քաղաքացի Հայոց թիւը բազ- մացունելու: Թէև առ այժմ ամե- րիկեան քաղաքացիներու թիւը շատ քիչ է Պոսթմի մէջ, բայց այդ քի- շին անգամ՝ Բաղաքացեաց ակումբ մը պիտի կազմեն, նպատակ ունենա- լով՝ իրենց Հայրենակցաց քաղաքացի լինելու դիւրութիւն ընծայելու՝ Հա- յուն ալ այս երկրի մէջ քաղաքա- կան արժանիք ստեղծել: Յաջողու- թիւն:

—Լօվէլէն կը գրէ մեր թղթա- կիցը թէ՛ տեղւոյն Մազիկացի խա- ղամոյները Եարաթ գիշերներէ սկըս- եալ մինչև Երկուշաբթի առաւօտ բաղլախաղով կը բաղլին, և որպէս զի ձեռքակալուելու վրասնէն ազատ մնան, մէյ մէկ գիրք կը պահեն քո- վերին՝ ի հարկին կարդալ ձեւացնե- լու համար:

—Նոյն թղթակիցը կը ծանուցանէ թէ՛ Յուլ. 29ին տեղւոյն Հայերը, Մաշ- թոց վարդ. ի նախագահութեամբ՝ նոր Հոգարարաձեռնութիւն մը ընտրած են, ո- րոյ անդամներն են Տիրաք Սանիկեան, Իյճեան, Սաչատուրեան, Կուլում- ճեան և Պատիկեան:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Պրայթըն, Յունիար 23. Պրայթընի Ուէսթըրն Ամիլի ճա- շարանին մէջ կազմուած Որբանոցն ընկերութիւնը իր եռամսնայ ժողո- վը ունեցաւ երէկ. Հաշիւներէն տես- նուեցաւ թէ՛ այս երեք ամիսներուն մէջ ընկերութեան մուտքը եղած է § 41.65 և ելքը՝ 22 սէնթ. գուս հա- ույթը եղած է § 41.39: Ընկերութիւ-

նը որոշեց որ 25 տոլարի գումար մը Պատրիարքարանի միջոցաւ զրկուի Մայիսիոյ Ազգ. որբանոցին, և մնա- ցածն ալ՝ նոյն միջոցով Աւրֆաի ազ- գային որբանոցին: Այս երրորդ ան- գամն է որ Որբանոցն ընկերութիւ- նը՝ քիչ կամ շատ կ'օգնէ որբերու մեծ պէտքին: Գումարն մէջ 25 բաժանորդ միայն ունենալով, Որբա- յունքն ընկերութիւնը կարող եղած է նուիրատուութիւններու ձեւեր սար- քելով՝ գոյացնել § 91.39, որուն 50 տոլարը արդէն խրկած է Պատրիար- քարան: Մեր այս գործաւոր դասա- կարգի արտակարգ գործունէութիւնը արդեօք չը պիտի՞ ամչցնէ մեծ քա- ղաքներու Հայ գաղութները, սրտնք իրենց թուով ու նիւթական կարողու- թիւնով կը գերազանցեն մեզ, և եթէ կամք ունենան մեր գործաւորներուն շափ դոհողութիւններ ընել, հրաշք- ներ գործելն ալ բան մը չէր իրենց համար:

Տեղի թիւ ընթերցողներուն հա- մար հաճելի պիտի ըլլայ անուշա- լակ թէ Պրայթընի Որբանոցն ըն- կերութեան հասոյթին մէկ մասն ալ գոյացած է Տեղի թիւ ծախելով:

ՆԵՐՍԷՍ Մ. ԹԱՎՄԱՍԵԱՆ ԵՒ ՄԱՐԿԵՐ Մ. ԹՈՒՆՍՄԱՆԵԱՆ


20 Հըստըն Փողոց, Պոսթըն, Մասս. Միակ Հայ Նպարալստաւ ի Պոսթըն ի քրտութիւն Պոսթընի և շրջա- կայի հայերուն կը յայտարարենք թէ՛ նպարեղէններու նոր խանութ մը բա- ցած ենք. ուր կը գտնուի ամեն տե- սակ ընտիր նպարեղէններ: օրինակ. պուլուր, ծեծած, ոսպ, սիսեռ, պամ- եայ, արեւիկան ձեւով սոցուած սուրճ (խահուէ), Սոյսերի պատարմայ, եսփ- րախ և այլն և այլն:

Ուրիշ քաղաքներէ յանձնարա- րութիւնք փութով և ճշգրի կը կա- տարուին՝ գոհացուցիչ գններով:

Փորձեցէք անգամ մը և գոհուի- տի մնաք:

Ա Բ Ր Ա Ն Ա Մ Ս Ա Ն Ա Ս Ի

Արտածիչ և ներածիչ Արեւելեան ամեն տեսակ ըմպելեաց և զանա- զան նպարեղիւնաց:



Թիւ 92 Ուաշինկթըն փողոց և 23 Բէքթըր փողոց, Նիւ Եորք: Խմելը մնասակար է թէ՛ և, բայց գուտն ու մաքուրը գործածելը օգտակար է:

Խմէ, գինի, օղի բայց քիչ, Եւ մաքուրը, գուտը կամ հիշ:

Իմ Արեւելքէ բերել տուած օղին ու մասթիքան չի կրնար գերազանցուիլ, զի մեր յատուկ գործարանի մէջ պատ- րաստուած է՝ եղջուր անմիջական հսկողութեան տակ: Իմ հին ու նոր գինիներ կրնան գոհ ընել ամեն զո- Նպարեղէններու մէջ առաջնա- կարգ տեղ մը կը բռնէ իմ վաճառա- տուն: Իմ ներածիչ տուած նպարեղ- ներս ոսպ կը հասնին Արեւելքէն եւ կը վաճառուին շուտով: Ունիմ ա- մեն տեսակ արեւելեան նպարեղէններ շաքարեղէններ, գէյթուն, ձիթաւոյ, նէրկիչէ և անոր յարակից պարա- գաները, թրքական ծխախոտ, սիկը- րէթ ևն. ևն.: Այլ միայն մեր ապ- րանքներն ընտիր են, այլ գներն հա- մեմատաբար դերամատչելի են ա- մեն գասակարգի անձանց համար:

Մեր դրոց ու անկեղծութեան վրայ գաղափար առնել ուղղը նոր յաճախորդներուն՝ կրնանք ծանօթ հայերէ վկայութիւններ դրիկոյ:

Յանձնարարութիւնք դուրսի քա- ղաքներէ ճշգրի կը կատարուին: Ա- մեն հրամանի հետ գնայն դէթ մէկ տասներորդ մասը գրիկուելու է կան- խիկ, իսկ մնացեալը Սի. Օ. Տի:

Կը վաճառուի նաև պուլուր, ծե- ծած, հալուէ, ֆուլթը, լէպլէպի ևն. 92 Washington St.

Ք Ո Ւ Է Ա Թ Ո Ւ Ղ Թ

1899

Ստորագրեալ՝ նախանձախնդիր գուակ Հայ. Սուրբ Եկեղեցոյ, ԿՈՒՉԵՄ 26Մ ՈՒՉԵՐ որ Գերապատիւ Յովսէփ Եպիսկոպոս Սարաճեան Ամե- րիկայի Հայոց Ընդհանուր Առաջնորդ մնայ:

- Անուն
Մականուն
Տարիք
Ծննդավայր
Հասցէ

